«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ «Երևանի Հ. 146 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Փախանյան Աննա

Ղեկավար՝ Պետրոսյան Քրիստինե

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 1. Էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ մշակութային այցի դերը միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործընթացում

1.1.Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում---- 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 2. Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն------ 11

Եզրակացություն---------- 17

Գրականության ցանկ---------- 18

Ներածություն

Ինչպես Աբովյանն է նկատել՝ բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով,իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով,ամենամեծ ուսուցիչն է,մի ուսուցիչ ,որ ամենից հեշտ ու դյուրին ձևով,կայուն ու խոր կերպով է սովորեցնում բնությունը ճանաչել։Այդ հրաշալի դպրոցը,ուսուցողական իր մեծ հնարավորություններով հանդերձ,լավ օգտագործելու համար հաճախակի պետք է լինել բնության գրկում՝նրանից,նրա մեջ ու նրա միջնորդությամբ սովորելու համար։ Ահա թե ինչու ուսուցման ընթացքում լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները,որպես շրջապատի բնության ու մարդկանց մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու միջոց։ Էքսկուրսիան ուսումնական գործունեության կազմակերպման ձև է,որը հնարավորություն է տալիս բնական պայմաններում անցկացնել դիտում և բնության օբյեկտների և գործընթացների հետազոտում։

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար, որովհետև դեպի բնություն ու արտադրություն կատարված էքսկուրսիաների ընթացքում նրանք ոչ միայն նոր գիտելիքներ ու հասկացություններ են ստանում,այլև բազմաթիվ նոր բառեր ու արտահայտություններ են սովորում։

Արդիականությունը: Մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է մանկապարտեզներում մշակութային և պատմական բնույթի էքսկուրսիաների կազմակերպման արդյունավետությամբ:

Նպատակը: Մեր նպատակն է, մշակել պատմական և մշակութային էքսկուրսիաներ, որոնց միջոցով կզարգացնենք նախադպրոցականների հետաքրքրությունը պատմական և մշակութային բնույթի թեմաներով:

Առաջադրված խնդիրները՝

1. Ուսումնասիրել և վերլուծել թեմային առնչվող մեթոդական գրականություն:
2. Պլանավորել և իրականացնել պատմական վայրում էքսկուրսիա՝ ներկայացնել արդյունքները:

Գլուխ 1. Էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ մշակութային այցի դերը միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործընթացում

1.1.Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Սաներն էքսկուրսիայի ընթացքում բազմաթիվ առարկաներ ու երևույթներ են տեսնում, որոնք լեզվի մեջ իրենց դրսևորումը գտնում են բառերի ու արտահայտությունների ձևով, ուստի յուրաքանչյուր նոր առարկա ու երևույթ ոչ միայն հարստացնում է աշակերտի մտածողությունը, լայնացնում նրա աշխարհաճանաչողության շրջանակները, այլև Սաների բառապաշարում մեջ նոր համալրում է բերում, երեխային նոր բառեր, դարձվածքներ ու արտահայտություններ է սովորեցնում: Էքսկուրսիայի ընթացքում երեխան ոչ միայն բազմաթիվ նոր բառեր է սովորում, այլև ճշտվում ու հղկվում է նրա ավելի վաղ սովորած բառապաշարը:

Դեպի տեսարժան վայրեր կամ արտադրություն կազմակերպված էքսկուրսիաների ընթացքում դաստիարակը ոչ միայն տվյալ թեմայի հետ կապվող նոր բառ-տերմիներն ու բառ-հասկացությունները պետք է բացատրի ու սովորեցնի, այլև բոլոր պատեհ առիթներն օգտագործի նոր բառեր սովորեցնելու համար:

Այսպիսով, երեխաները էքսկուրսիայի ընթացքում հարստացնում են իրենց գիտելիքները, ծանոթանում են մեր երկրի պատմությանը, զարգացնում են իրենց գեղագիտական ճաշակը, շփվում են միմյանց հետ: Էքսկուրսիաները տալիս են սաներին դրական դաստիարակություն: Այն երեխաների մոտ հարստացնում է ուրախ հիշողությունը: Յուրաքանչյուր դպրոց իր կրթական ծրագրում պետք է ներառի էքսկուրսիաներ, որոնց միջոցով դասերն ավելի պատկերավոր են անցնում: էքսկուրսիան հսկայական նշանակություն ունի նաև որպես աշակերտների խոսքի զարգացման՝ բառապաշարի հարստացման կազմելու կարողության մշակման, բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործման միջոց: Այս առումով յուրաքանչյուր էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնել, թե բացի գիտելիքների ուսուցումից այն լեզվական ինչ նպատակներ է հետապնդում, լեզվական տեսակետից ինչ նոր բան է տալու երեխաներին: [1, էջ 15-18]

Ուսումնական նպատակով անցկացվող էքսկուրսիաները ըստ գործադրման ժամանակի և տեղի լինում են մի քանի տեսակ՝ նայած դաստիարակի

նպատակադրմանը և ավանդվող թեմայի հետ էքսկուրսիայի ունեցած փոխհարաբերությանը:

Հետևաբար՝ կարելի է անցկացնել չորս տիպի էքսկուրսիաներ.

- նոր նյութի հաղորդումը նախապատրաստող,
- նոր նյութի հաղորդման,
- անցած նյութի ամրապնդման,
- անցածի կրկնության և ամփոփման:

Բազմաթիվ աշխարհաճանաչողական բնույթի նյութեր կարելի է անցնել էքսկուրսիայի միջոցով, նոր գաղափարը, նոր հասկացությունը հաղորդել էքսկուրսիայի ընթացքում՝ տվյալ օբյեկտը դիտելու և ուսումնասիրելու ժամանակ: Էքսկուրսիայի այս տիպը, որպես բացօթյա էքսկուրսիա, լայն գործադրություն պետք է ունենա՝ թարմություն ու բազմազանություն մտցնելով ուսուցման պրոցեսում, իսկապես ակտիվ, հետաքրքրական ու զարգացողական դարձնելով այն: Հետո նոր նյութի վերաբերյալ ուսուցչի ասած յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն ու միտք երեխաների համար որոշակի բովանդակություն է ստանում, որովհետև խոսքի նյութ դարձած առարկայի կամ երևույթի մասին նա արդեն կոնկրետ պատկերացում ունի:

Եթե նյութը դասագրքում այնքան համառոտ է, որ հնարավորություն չի ընձեռում տվյալ հասկացության մասին բավականաչափ ընդարձակ գաղափար տալու կամ թեման այնքան բազմազան է, որ միայն բառային մտապատկերներով հնարավոր չէ ապահովել նրա յուրացումը, պետք է այդ նյութի ուսումնասիրությունը կապել էքսկուրսիայի հետ: Այս դեպքում շատ օգտակար կլինի էքսկուրսիան անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետ, որպեսզի սաները տեսնեն այն, ինչ անցել են մանկապարտեզում ստացած բառային մտապատկերները զուգակցվեն տեսողական մտապատկերների, զգայական ընկալումների հետ: Այս դեպքում սաների ստացած նախնական ծանոթությունն անհրաժեշտ է էքսկուրսիայի ժամանակ դաստիարակի տված ընդարձակ բացատրությունները ճիշտ հասկանալու և լավ ըմբռնելու համար: [8, էջ 25-56]

Բոլորովին այլ ձևով են անցկացվում անցածի կրկնության կամ ամփոփման նպատակ հետապնդող էքսկուրսիաները: Դրանք կարելի է անցկացնել առանձին

թեմաների կամ ենթաթեմաների ուսումնասիրությունից հետո՝ անցածը ամփոփելու համար: Իսկ ամբողջ դասընթացը կամ նրա բաժինները անցնելուց հետո՝ անցածը կրկնելու, վերհիշելու և, դրանով իսկ, ամփոփելու և ամրապնդելու համար: Այս դեպքում շաբաթներ կամ ամիսներ առաջ անցածը աշակերտների աչքի առաջ վերստին կենդանանում է ու նրանց հիշողության մեջ թարմացվում: Այսպիսի ամփոփումը կամ կրկնությունը շատ ավելի օգտակար ու արդյունավետ է, քան սովորական կրկնությունը, որը հաճախ շատ ցածր արդյունք է տալիս:

Որևէ թեմայի ուսումնասիրության կապակցությամբ էքսկուրսիաներ նախատեսելիս նրա տիպի որոշումը շատ կարևոր նշանակություն ունի էքսկուրսիայի լավ կազմակերպման, նրա ճիշտ զուգակցման տեսակետից: Առհասարակ էքսկուրսիայի տիպի ճիշտ որոշումը ոչ միայն նրա լով ու նպատակայնության ամենահիմնական նախապայմաններից մեկն է և դրան պատշաճ լրջությամբ պետք է վերաբերվել:

Ծրագրով նախատեսված աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների մի զգալի մասը երեխաներին կարելի է հաղորդել էքսկուրսիաների միջոցով, որովհետև այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ դասն աշխույժ ու հետաքրքրական է դառնում: [9, 36-38]

Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակն ու երեխաները թողնում են դասասենյակը և դուրս են գալիս ազատ օդ, խախտվում է դասի սովորական ընթացքը, փոխվում է դասի թե՛ տեղը և թե՛ անցկացման ձևը: Այդ բոլոր փոփոխությունները միանգամայն դրական նշանակություն են ունենում ինչպես հաղորդվող նյութի կայուն յուրացման, այնպես էլ երեխաների թարմացման ու աշխուժացման տեսակետից: Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ փաստերի վրա երեխաներին ցույց տալ բնության բազմապիսի առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապակցությունը և մարդու իշխանությունը բնության վրա: Իսկ այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի բնությունը:

Ընդունված է ասել, որ դասին լավ նախապատրաստվելը այն լավ անցկացնելու հիմնական նախապայմանն է, սա մեծապես վերաբերում է էքսկուրսիայի

անցկացմանը: Էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել հատկապես նրա երեք հիմնական փուլերի՝

- նախապատրաստման,
- անցկացման,
- ամփոփման վրա:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի նպատակը որոշելուց հետո ուսուցիչը պետք է վերստին մանրամասնորեն ուսումնասիրի տվյալ թեման, թերթի օժանդակ նյութերը, խորհրդակցի համապատասխան մասնագետների հետ, թարմացնի ու լրացնի իր գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ, որպեսզի կարողանա երեխաներին բավարար չափով տեղեկություններ տալ էքսկուրսիայի օբյեկտի մասին, ճիշտ ու հստակ պատասխանել այդ ընթացքում ծագած հարցերին: [3, էջ 65]

Դրանից հետո պետք է կատարել նաև էքսկուրսիայի վայրի ուսումնասիրություն, որը էքսկուրսիայի լավ կազմակերպման համար վճռական նշանակություն ունի:

Այսպիսի նախնական ուսումնասիրությունից հետո ուսուցիչն արդեն մտովի կարող է պատկերացնել էքսկուրսիայի ողջ ընթացքը և, ըստ այնմ էլ, կազմել նրա պլանը: Պլան կազմելիս նրանում պետք է ընդգրկել հետևյալ հիմնական հարցերը.

1. Էքսկուրսիայի թեման
2. Գիտելիքների համառոտ շարադրանքը, որը երեխաները պետք է ստանան էքսկուրսիայի ընթացքում
3. Էքսկուրսիայի ընթացքի հակիրճ նկարագրությունը, շոշափվող հիմնական հարցերը, աշակերտներին տրվելիք կոլեկտիվ ու անհատական աշխատանքի առաջադրանքները
4. Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփվիչ զրույցի համառոտ բովանդակությունը
5. Էքսկուրսիայի կահավորումը՝ հանդերձանք, գործիքներ և այլ նյութեր: [3, 11-15]

Տեղ հասնելուց հետո ուսուցիչն ի մի է հավաքում բոլոր աշակերտներին և վերստին հիշեցնում ու բացատրում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները և աշակերտների անելիքը: Այս դեպքում արդեն աշակերտների համար պարզ է դառնում,

որ էքսկուրսիան դաս է, և նրանցից յուրաքանչյուրն իր որոշակի տեղն ու դերն ունի այդ դասի ընթացքում:

Դաստիարակի հիմնական խնդիրը էքսկուրսիայի օբյեկտի՝ որևէ երևույթի, բնության հատվածի կամ թանգարանային ցուցանմուշի դիտման, զննության կամ ուսումնասիրության ճիշտ կազմակերպումն է: Դրա համար նա ամենից առաջ աշակերտների մեջ հետաքրքրություն պետք է առաջացնի դեպի տվյալ օբյեկտը, որպեսզի նրանք անհրաժեշտ ուշադրությամբ ու լարվածությամբ դիտեն այն: Այս նպատակով նա աշակերտներին այնպիսի հարցեր պետք է առաջադրի, որոնց պատասխանը գտնելու համար նրանք հարկադրված լինեն ամբողջ էքսկուրսիայի ընթացքում ուշադրությամբ դիտելու ուսումնասիրվող առարկան կամ երևույթը, խորամուխ ինեն այն բազմակողմանեիորեն ընկալելու, համանման այլ առարկաների ու երևույթների հետ համեմատելու, գտնելու դրանց էական ու երկրորդական հատկանիշները, նրա առանձին մասերն ու դրանց համադրման ձևերը և այլն:

Դիտման ընթացքում կարելի է նաև զրույց անցկացնել կամ հարցեր առաջադրել տվյալ առարկայի վերաբերյալ, որպեսզի օբյեկտի դիտումը նրանց կողմից ավելի նպատակային դառնա: [2, էջ 36-39]

Ամեն մի էքսկուրսիայի ժամանակ էլ, բացի ընդհանուր հանձնարարություններից, որոնք բխում են հիմնական թեմայից, լինում են նաև որոշ նյութեր հավաքելու անհատական կամ խմբային հանձնարարություններ ևս, որոնք անմիջականորեն չեն կապվում տվյալ հարցի հետ, այլ կատարվում են հատուկ նպատակով, հետագայում այդ նյութերի շուրջ իրազննական աշխատանք տանելու համար: Սակայն դրանք այնպիսի հանձնարարություններ պետք է լինեն, որոնք էքսկուրսիայի բուն աշխատանքին չխանգարեն: Այս կարգի հանձնարարությունները մեծ մասամբ պետք է տալ էքսկուրսիայից հետո, որպեսզի դրանց կատարումը բուն էքսկուրսիային չվնասի: Իսկ երբեմն էլ ամբողջ էքսկուրսաիյի նպատակը կարող է լինել նոյութերի հավաքումը: Այս դեպքում առանձին սաների կամ սաների խմբերի տարբեր հանձանարարություններ պետք է տալ, որպեսզի միմյանց չխանգարեն:

Աշխատանքն ավարտելուց անմիջապես հետո, հենց էքսկուրսիայի վայրում պետք է անցկացնել ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփում: Դրա համար ուսուցիչը աշակերտներին պետք է հավաքի իր մոտ և ակտիվ երկկողմյան զրույցի

միջոցով պարզի, թե ինչ նպատակ էր հետապնդում էքսկուրսիան, և նրանք ինչպես կատարեցին իրենց առջև դրված խնդիրը: Սաները համառոտ կերպով վերարտադրում են իրենց ստացած տպավորությունները, պատասխանում ուսուցչի հարցերին և այլն:

Այդպիսի թռուցիկ ամփոփման համար կարելի է առաջադրել մոտավորապես այսպիսի հարցեր.

1. Ի՞նչ նպատակով էր կազմակերպվել էքսկուրսիան:
2. Ի՞նչ պետք է անեին աշակերտները էքսկուրսիայի վայրում:
3. Ո՞վ ինչպե՞ս է կատարել իրեն տրված հանձնարարությունը:
4. Ի՞նչ առարկաներ կամ երևույթներ ուսումնասիրեցին էքսկուրսիայի ընթացքում:
5. Ո՞ւմ համար ի՞նչ հարցեր են մութ ու անհասկանալի մնացել:
6. Ի՞նչ սովորեցին այդ էքսկուրսիայի ընթացքում կամ ի՞նչ արդյունք տվեց էքսկուրսիան և այլն:

Էքսկուրսիայի վայրում կատարվող այս ամփոփումը պետք է շատ կարճ տևի, որովհետև ժամանակի հիմնական մասը պետք է հատկացնել օբյեկտի ուսումնասիրմանը, սակայն այդ ամփոփումը, թեկուզ և մի քանի նախադասությամբ, անպայման պետք է կատարել որպես դաս-էքսկուրսիայի ավարտ: Իսկ աշխատանքի արդյունքների բուն ամփոփումը, ինչպես նաև հավաքած նյութերի մշակումն ու ուսումնասիրությունը կատարվում է խմբասենյակում՝ մեծ մասամբ էքսկուրսիայից մեկ օր հետո, որպեսզի երեխաների տեսածն ու լսածը, ստացած բազմապիսի տպավորություններն ու պատկերացումները նրանց ուղեղում անհրաժեշտ նստվածք տան: Եթե էքսկուրսիային հետևել է նյութի մշակմանը և կազմակերպվել է անցածը ամրապնդելու, յուրացումը կայունացնելու նպատակով, ապա պետք է բավարարվել միայն էքսկուրսիայի վայրում կատարված ամփոփումով և խմբասենյակում այլևս չանրադառնալ դրան:

Էքսկուրսիայի արդյունքների ամփոփումն այս նույն ձևով կարելի է անցկացնել նաև այն ժամանակ, երբ էքսկուրսիան թեմայի ամփոփման կամ անցածի կրկնության ու ամրապնդման նպատակ է հետապնդում: Այս դեպքում ևս նյութի խորացման կամ ձեռք բերած գիտելիքներն ամփոփելու, խորացնելու, սահմանումներ ու եզրակացություններ անելու հարկ չկա, որովհետև այդ բոլորն արվել է նյութի ուսումնասիրման ժամանակ,

իսկ դրանց վերհիշումն ու կրկնությունը կատարվում է էքսկուրսիայի ու նրան հաջորդած թռուցիկ ամփոփման ընթացքում: [7, 56-57]

Իսկ եթե էքսկուրսիան անցկացվել է նյութի ուսումնասիրությունը նախապատրաստելու համար, թռուցիկ ամփոփումով չի կարելի բավարարվել: խմբասենյակում նյութի ուսումնասիրման ժամանակ պետք է անդրադառնալ նաև էքսկուրսիայի նյութերին՝ ի մի բերելով ու ամփոփելով էքսկուրսիայի արդյունքները:

Էքսկուրսիայի արդյունքների ամփոփման ժամանակ առանց շտապելու կարելի է մանրամասնորեն քննության առնել ու վերլուծել աշխատանքի ամբողջ ընթացքը, նույնիսկ պատասխանել էքսկուրսիայի ընթացքում ծագած այն հարցերին, որոնք անմիջական կապ չունեն թեմայի հետ, բայց կարող են նպաստել երեխայի ճանաչողության զարգացմանը:

Էքսկուրսիայի արդյունքների ամփոփման ձևերից մեկն էլ հավաքած նյութերը իրազննական կամ առարկայական պարապմունքի համար նախատեսելն է: Դրա համար հավաքված նյութերը խմբավորում են ըստ ենթաթեմաների և առանձին պարապմունքերի ուսումնասիրման նյութ դարձվում: Այս առումով էքսկուրսիաների հիմնական նպատակներից մեկն էլ իրազննական պարապմունքերի համար անհրաժեշտ նյութերի հայթհայթումն է ու նախապատրաստումը:

Յուրաքանչյուր երեխայի տրվել էր ուսումնասիրել Մատենադարանում գտնվող որևէ գիրք, ձեռագիր կամ մշակութային մի պատառիկ: Էքսկուրսիայի ժամանակ ամեն մի երեխա պետք է ուշադիր լսեր գիդ-էքսկուրսավարի բացատրությունները, իսկ աշխատանքի ավարտից հետո պետք է ներկայացներ իրեն հանձնարարված գրքի ստեղծման ամբողջական, ավելի մանրամասն պատմությունը, դրա վերաբերյալ տար ուշագրավ և հետաքրքիր դիտարկումներ, եզրահանգումներ: [7, էջ 48-53]

Գլուխ 2. Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն

Դարապմունքի պլան

Առարկան՝ խոսքի զարգացում

Ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը՝ Էքսկուրսիա Հայաստանի պատմական վայրերում:

Անհրաժեշտ նյութեր՝

- Պաստառ

Դարապմունքի նպատակները և խնդիրները՝

1.Ուսումնական՝

- Որպես մասնակից պատմելու աշակերտների կարողության զարգացում:

2.Դաստիարակչական՝

- Սերմանել աշակերտների մեջ սեր հայրենիքի հանդեպ:
- Ձևավորել բարեկիրթ հաղորդակցական կարողություն:

3.Զարգացնող՝

- Զարգացնել սովորողների ուշադությունը, նրբանկատությունը:

Խթանման փուլ:

Էքսկուրսիայի ընթացքում մենք եղանք մի քանի պատմական վայրերում: Առաջինը այցելեցինք Տառապուրակ, որտեղ շատ հետաքրքիր անցկացրեցինք մեր զրույցը: Հետո այնտեղից գնացինք դեպի Սաղմոսավանք, տեսանք վանքը նկարվեցինք: Դրանից հետո այցելեցինք Ամբերդ ամրոց-բերդաքաղաք, պատմեցինք աշակերտներին բերդաքաղաքի մասին:

Էքսկուրսիան անցավ շատ հետաքիքիր երեխաները մեծ բավականություն ստացած:

Էքսկուրսիայի անկացում՝

- Ներածական մաս՝ էքսկուրսիայի նպատակի, խնդիրների ներկայացում սովորողներին, ուսումնական պարագաների, առաջադրանքների բաժանում, բնության մեջ վարքի կանոնների քննարկում,
- Հիմնական մաս (էքակուրսիայի տարածքում)՝ նախնական զրույց, ծանոթացում վայրին, ինքնուրույն աշխատանքի կազմակերպում անհատական, զույգերով կամ խմբերով, աշխատանքի արդյունքների ամփոփում, հաշվետվություն, գրանցումներ աշխատանքային տետրերում,

- Եզրափակիչ մաս՝ էքսկուրսիայի ընթացքում հավաքած նյութերի, տեղեկույթի մշակում, դիտման արդյունքների գրանցում տետրերում, էքսկուրսիայի ընթացքում յուրացված ուսումնական նյութի ամրապնդում:

Իմաստավորման փուլ:

զավակ – որդի

խայտաբղետ – գույնզգույն

տապ – շոգ

կայտառ – առույգ

ցատկետել - թռչկոտել:

Կշռադատման փուլ:

Իսկ հիմա կկատարենք «Մտագրոհ» մեթոդական հնարը:



Հայկական մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է:

Շատ կարևոր է նախադպրոցականներին իրազեկ դարձնել հայկական մշակույթին, պատմությանը:

Մենք որոշեցինք շարժվել մեթոդական ծրագրով: Էքսկուրսիան սկսեցինք հայոց այբուբենի հուշարձան՝ Տառապուրակով: նախադպրոցականները որոշ տեղեկություններ արդեն ունեին Տառապուրակի մասին, սակայն վերհիշեցինք, որպեսզի ավելի լավ ամրապնդվի նախադպրոցականների հիշողության մեջ:

Տառապուրակը կառուցվել է 2005 թվականին հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի առթիվ: Հուշարձանը ներառում է հայոց այբուբենի 39 տառերի զարդաքանդակները և հայ մեծերի հուշարձանները:

Տառապուրակում կանգնեցված քանդակներն են՝ «Գրիգոր Լուսավորիչ», «Գրերի արարումը, 405», «Մովսես Խորենացի», «Մխիթար Գոշ, Դատաստանագիրք», «Անանիա Շիրակացի», Շիրակացու վեր բարձրացրած ձախ ձեռքում երկրագնդի և տիեզերքի սիմվոլն է, իսկ աջ ձեռքը դեպի ներքև է ուղղված: Ըստ քանդակագործի՝ վերև և ներքև պարզած ձեռքերը երկնքի և երկրի հետ կապի խոսուն վկայություն են: «Խաչատուր Աբովյան», արձանի ներքևում քանդակված են Աբովյանի խոսքերը. «Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք մի տար թշնամյաց»: «Թումանյանը և իր հերոսներից Գիքորը»:

նախադպրոցականները հիացմունքով էին շրջում տառապուրակում: Տեղեկություններ ստացան նաև հայ մեծ գրողների մասին, օրինակ՝ Մովսես Խորենացու, Մխիթար Գոշի, Անանիա Շիրակացու և այլն: Իմացան նաև որ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանատունն է այստեղ: Այցելեցին Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին:

Տառապուրակից հետո շարժվեցինք դեպի Սաղմոսավանք: Եվ սկսեցինք աշակերտներին պատմել եկեղեցու մասին: Եկեղեցին կառուցվել է 1215 թ.-ին՝ Հայոց արքայազն Վաչե Վաչուտյանի կարգադրությամբ, իսկ ավելի ուշ կառուցվել են այլ շինություններ՝ Սուրբ Աստվածածին եկեղեցի, պատշգամբ և գրապահոց: Թվարկված շինությունները ձևավորել են Սաղմոսավանքը, որը հայտնի է որպես ձեռագրերի պահեստ: Գրքերի պահեստում ստեղծվել և պատճենվել են տարբեր պատկերազարդեր: Վանական համալիրի տարածքում և դրան հարող գերեզմանատան տարածքում տեղադրված են բազմաթիվ հին խաչքարեր: Սաղմոսավանքը հատկապես գեղեցիկ է, եթե նայում եք դրան հարևան Քասախ գետի հակառակ կողմից:

Սաղմոսավանքից հետո նախադպրոցականների հետ միասին գնացինք Ամբերդ ամրոց-բերդաքաղաք:

Պատմեցինք նաև Ամբերդ ամրոց-բերդաքաղաքի մասին: Ամբերդում ամրոց է եղել դեռևս վաղնջական ժամանակներից: Ամրոցը ներկայիս տեսքով կառուցել են Կամսարական իշխանները՝ VII դարում:

Ամբերդ ամրոցը և միջնադարյան բերդաքաղաքն ընդգրկում են ընդարձակ եռանկյունաձև հրվանդան, որի երկու կողմերում հոսում են Ամբերդ և Արքաշեն

գետերը, որոնք միանում են հրվանդանի ստորին հատվածում՝ բնականից ևս անառիկ դարձնելով Ամբերդը:

Հուշարձանը բաղկացած է իշխանական եռահարկ դղյակից, բերդապարիսպներից, բաղնիքից, փոքր մատուռից, եկեղեցուց, գետնուղիներից: Ամրոցի անառիկ դիրքը էլ ավելի է ամրացվել պարիսպներով և բուրգերով: Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված մեծ քանակությամբ գորգի կտորները վկայում են, որ դղյակի պատերը ծածկված են եղել գորգով:

Այսպիսով, էքսկուրսիան իր մեջ ներառում էր երեք պատմամշակութային կոթողներ՝ Տառապուրակը, Ամբերդ ամրոց-բերդաքաղաքը և Սաղմոսավանքը: Էքսկուրսիայի արդյունքում աշակերտները ձեռք բերեցին գիտելիքներ երեք պատմամշակութային կոթողների մասին:

Իմացան, որ Տառապուրակը կառուցվել է 2005թվականին գրերի գյուտի 1600-ամյակի առիթով: Տեղեկություններ ստացան հայ մեծ պատմիչների մասին, որոնք են՝ Մովսես Խորենացին, Մխիթար Գոշը, Անանիա Շիրակացին: Իմացան նաև, որ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանատունն է այնտեղ: Տառապուրակից հետո աշակերտների հետ միասին շարժվեցինք Սաղմոսավանք եկեղեցի: Աշակերտները իմացան, որ եկեղեցին կառուցվել է 1215 թվականին՝ հայոց արքայազն Վաչե Վաչուդյանի կարգադրությամբ: Ինչպես նաև իմացան, որ վանական համալիրի տարածքում կա գերեզմանատուն, որի տարածքում տեղադրված են հին խաչքարեր:

Պարապմունք

թեման՝ <<Տարվա եղանակներ>>

ՆՊԱՏԱԿԸ

- Ծանոթացնել երեխաներին, տարվա եղանակներին
- Ասել թե տարին քանի եղանակ ունի
- Ասել տարվա եղանակների հերթափոխության մասին
- Ծանոթացնել, թե տարվա որ եղանակներին բնության մեջ ինչպիսի երևույթներ են լինում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Սովորեցնել տարվա եղանակների մասին, գիտելիքներ ունենա կենդանիների հատ կատարվող փոփոխությունների մասին:

- Սովորեցնել երեխաներին, որպեսզի կարողանան բացատրել տարվա եղանակների հերթագրությունը:

Կահավորումը՝

Տեսահոլովակ, պաստառներ տարվա եղանակներով:

Պարապմունքի ընթացքը՝

Անցկացնել նախապատրաստական զրույց, ծանոթացնել նրանց տարվա եղանակներին: Պատմել աշակերտներին բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին: Պատմել նրանց, թե ինչպես են առաջանում գիշերը և ցերեկը: Ասել նրանց, թե որն է տարվա եղանակների առաջացման պատճառը:

Ասել նրանց, որ տարին ունի 4 եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Ասել, թե որ եղանակն ինչ ամիսներ ունի: Գարնան ամիսներն են՝ մարտ, ապրիլ, մայիս: Ամռան ամիսներն են՝ հունիս, հուլիս, օգոստոս: Աշնան ամիսներն են՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր: Ձմռան ամիսներն են՝ դեկտեմբեր, հունվար, փետրվար:

Եզրակացություն

- Ուսումնասիրելով և վերլուծելով մեր թեմային առնչվող մեթոդական գրականություն, հանգեցինք այն եզրակացությանը, որ թեև էքսկուրսիաների ուսումնասիրման և պատմական նյութերի ուսումնասիրման առանձնահատկությունների մասին կան տարաբնույթ հոդվածներ և ձեռնարկներ սակայն, թե պատմական նյութերը ինչպես ուսումնասիրել էքսկուրսիաների միջոցով, ինչպես կազմակերպել այդ էքսկուրսիան՝ մեթոդական գրականության մեջ սակավ տեղեկություններ կան:
- Մեր պլանավորած և իրականացրած պատմական վայրում էքսկուրսիայի արդյունքում պարզեցինք, որ պատմական վայրերում իրականացրած էքսկուրսիաները ճանաչողական և դաստարակչական տեսանկյունից մեծ նշանակություն ունեն, և երեխաներ ավելի դյուրին են ընկալվում ուսումնասիրվող նյութը: Այն նպաստում է երեխաների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Պարզեցինք նաև այն, որ էքսկուրսիայի արդյունքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում այլև բազմաթիվ նոր նյութեր են հավաքվում զարգացնելով երեխաների հիշողությունն ու դիտողականությունը:

Պարզ դարձավ նաև, որ էքսկուրսիայի արդյունքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում այլ բազմաթիվ նոր նյութեր են հավաքվում՝ երեխայի մեջ զարգացնելով ուշադրություն, դիտողականություն, հիշողություն և ձևավորում աշխարհայացք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանուկյան Ս. Պ., Մանկավարժական և աշակերտական դասանպատակները, Եր., <<Լուսաբաց>>, 2003:
2. Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց - բառարան, Երևան, 2013:
3. Գիտամեթոդական հանդես՝ <<Նախաշավիղ>> (2001/2002):
4. «Հեքիաթների քո աշխարհը». Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկ, Երևան, 2011, էջ:
5. Սեմինար պարապմունքների ուղեցույց, ԱՅՐԵՔՍ, Եր., 2002:
6. https://forum.armedu.am/showthread.php/2807
7. http://shirak.asj-oa.am/196/1/133-139.pdf